ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Լեփսիուսի 6-րդ փողոցի հ.37 շենքի հ.46՝ 39.3քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.12.2013թ. հ.06122013-01-0095 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վարդան Համբարձումյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարդան Համբարձումյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Լեփսիուսի 6-րդ փողոցի հ.37 շենքի հ.46՝ 39.3 քմ ընդհանուր մակերեսով իր ընտանիքի կողմից զբաղեցրած բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Լեփսիուսի 6-րդ փողոցի հ.37 շենքի հ.46՝ 39.3 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.12.2013թ. հ.06122013-01-0095 վկայականի տվյալների հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 13.12.2013թ. հ.ԿԽ-2/7557 գրության համաձայն Վարդան Համբարձումյանի անվամբ Լեփսիուսի փողոցի հ.37 շենքի հ.36 հասցեում գտնվող՝ 55.1 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ գրանցված է համատեղ սեփականություն: Համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 11.11.2009թ. հ.2580242 վկայականի տվյալների՝ նշված բնակարանը հանդիսանում է թվով 10 անձանց համատեղ սեփականություն:

Համաձայն Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Ղարս» համատիրության կողմից 08.05.2014թ. տրված տեղեկանքի Լեփսիուսի փողոցի հ.37 շենքի հ.36 հասցեում գտնվող՝ 55.1 քմ ընդհանուր մակերեսով բնակարանում հաշվառված են 10 անձ: Թեև Վարդան Համբարձումյանը հանդիսանալով նշված բնակարանի համասեփականատեր բնակարանային պայմանների կարիքավորությունից ելնելով 1993 թվականից իր ընտանիքի 4 անձով՝ ինքը, կինը և երկու որդիները տեղափոխվել են Լեփսիուսի 6-րդ փողոցի հ.37 շենքի հ.46՝ 39.3 քմ ընդհանուր մակերեսով կիսանկուղային տարածք:

Համաձայն Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Ղարս» համատիրության կողմից 08.05.2014թ. տրված տեղեկանքի, վերջիններս իրենց միջոցներով կատարել են վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, և 1993 թվականից սկսած մինչ օրս վճարել են կոմունալ և սպասարկման վճարումները:

Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ավագանու 08.11.2007թ. հ.85/6 որոշմամբ նշված կիսանկուղային տարածքը օտարվել է քաղաքացի Վարդան Համբարձումյանին, սակայն որոշումից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել:

Երևանի քաղաքապետի 21.11.2013թ. հ.5862-Ա որոշմամբ կիսանկուղային տարածքի գործառական նշանակությունը սահմանվել է բնակելի և հանվել է ոչ բնակելի ֆոնդից: Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.12.2013թ. հ.06122013-01-0095 վկայական):

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ